## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1932 – Մարտ – Թիւ 3


էջ

ՓԷՉԻԿԵԱՆ Հ. Ե. — Մեր լաւագոյն յոյսերն և անոնց հոգածութիւնը . . . 97

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

Հ. Ե. Փ. (հր). — Տաղ խաչելութեան (ի Յարութիւն վ.է) . . . . 99

» Տաղ Յարութեան . 100

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ Հ. Գ. — Քրիստոնէական ճարտարապետութիւն (պատմական հետազօտութիւններ) . . . . 101

ՍԱՖՐԱՍՏԵԱՆ ԱՐՇԱԿ. — Հաթեր և Ուրարտեանք . . . . 113

ՏԷՐՏԷՐԵԱՆ Ս. — Թռնովայի անհետացած հայ գաղութէն նշխարներ . . . 116

ՈՐԲԵՐԵԱՆ Ռ. — Լորտ Պայրըն . . 117

Փ. Հ. Ե. — «Le Foyer»ի սայթաքումը (Աշտիշատի մասին) . . . 127

**ԳՐԱԿԱՆ**

ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — Սմբատ Բիւրատ. . 129

ՔԱՋԱՐԵՆՑ ՀՐԱՉ. — Սրտիս հետ (քերթ.) . 132

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. Վ. — Հայկական ձեռագիր (քերթ.) . . . . 133

ՍՕՖԵԱՆ ՎԱՀՐԱՄ. — Խորհէ (քերթ.). . 133

ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. — Տիեզերական տագնապ – Քաղցր մենութիւն – Գաղտնիք (քերթ.) . . . . 134

**ԳՐԱԽՕՍԱԿԱՆ**

ՓԷՉԻԿԵԱՆ Հ. ԵՂԻԱ. — Տաւիղ Եօլեան (Գ. Կառվարենցի) . . . . 135

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ**

ՄՈՒԹԱՖԵԱՆ ԶԱՐԵՀ. — Գեղարուեստի կազմաւորումը (իտալ. վերածնունդ) . . 137

ԽՄԲ. — Աւանդավէպ մը Սեւանի վանքին անցեալէն . . . . . 140

**ԳԻՏԱԿԱՆ**

Փ. Հ. Ե. (թրգ.) — Համմուրապիի օրինագիրքը . . . . . 141

**ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ**

ԹՈՄԱՃԵԱՆ Հ. ԹԱԴԷՈՍ. — Անակի բարբանջանք կուսակրօնութեան դէմ . . 125

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ**

Հ. Բ. Ը. Մ. — Մ. շրջաբերականէն . 144


## SOMMAIRE

1932 – Mars – numéro 3


p.

*Paitchikian P. Elie.* — Notre jeunesse et son éducation . . . . . 97

**PHILOLOGIE**

*P. P. E.* — Ode au Crucifix (du prêtre Haroutiun, 1740-60) . . . . 99

» Ode à la Résurrection (d'auteur inconnu, du XIII siècle?) . . 100

*Nahabédian P. G.* L'Architecture des églises (recherche historique) . 101

*Safrastian Archag.* — Les Hattis et les Ourartiens . . . . . 113

*Dérdérian S.* – Quelques mémoires de la Colonie arménienne de Trnova . 116

*Orperian R.* — Lord Byron (étude) . 117

*P. P. E.* — A propos de «Aštišat» . 127

**LITTERATURE**

*Erémian P. S.* — Sempad Purad. . 129

*Katcharentz H.* — Avec mon cœur (poésie) . . . . . 132

*Horhannessian P. Vahan.* — Manuscrit Arménien (poésie) . . . 133

*Sofian Vahram.* — Souviens-toi! (poésie) . . . . . 133

*Srabionian Aramaïs.* — Crise mondiale - Douce solitude - Secret (poésies) . 134

**RECENSIONS**

*Paitchikian P. Elie.* — Guitare Evolien (par G. Garvarentz) . . . . 135

**BEAUX ARTS**

*Moutafian Zareh.* — Formation de l'Art. (Renaissance italienne) . . . 137

*Réd.* — Une légende historique de Sévan 140

**SCIENCE**

*Paitchikian P. E.* — Le Code de Hammourabi (version). . . . . 141

**ACTUALITÉS**

*Tomadjan P. Thadée.* — A propos du célibat ecclésiastique . . . 125

**ECHOS d'ARMÉNIE**

*U. G. B. A.* — Circulaire de U. G. B. A. 144





ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843-1932

ՄԱՐՏ

ԹԻՒ 3

ՀԱՏ. Ղ ՈՅՁԱ-ՈՅՁԲ — ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ


ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ՄԵՐ ԼԱՒԱԳՈՅՆ ՅՈՅՍԵՐՆ ԵՒ ԱՆՈՆՑ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆԸ

Կը դառնայ գարունն, կը դառնայ նոր կեանք, նոր ծիլ ու ծաղիկ, ծիծառ ու զեփիւռ, բայց կը վերածնի՞ն արդեօք մեր յոյսերն ալ կենսալից ու ժպտուն...։

Յոյսեր շատ ունեցանք, հեռաւոր ու աղօտ, կորուսած աստղեր անծայրածիր երկնակամարներու խորքին մէջ, որոնց ի զուր յառեցինք մեր աչքերն անքթիթ։ Երկար մնացինք առկախ անծանօթին հանդէպ, եւ մեր անկումին մէջ միայն անդրադարձանք մեր հետապնդումը ցնորքներու։

Բայց ունի՞նք մենք իսկական, հարազատ, սփոփիչ յոյսեր որ ծաղկին այս գարնան։ — Անշուշտ. վկայ՝ մեր ապրումն իսկ. քանի որ *մեռելներու շիրմին է միայն որ կը խուսէ յոյսը — յետին աստուածուհին*։

Ու որքան ալ վայրավատին ու չարատանջ, եւ սակայն կ'ապրինք. եւ այդ կենեղուտ ապրումին ծոցէն նորաթեւ կը սաւառնին մեր լաւագոյն յոյսերը՝ ՄԵՐ ՍԵՐՈՒՆԴԸ։

Գիտակից մեր ապագային՝ որ այդ սերունդին մէջ կ'ապրի, ո՞րքան եւ ի՞նչպէս կը գուրգուրանք անոր, ո՞րքան եւ ո՞րպէս կը խնամարկենք։ Ահա թէ ո՛ւր է մեր յոյսը, եւ ի՛նչ մեր պարտականութիւնը անյեղլի եւ բացարձակ, որ կը ծանրանայ անհատին եւ հանրութեան խղճին վրայ։

Անշուշտ գովելի է կաթոգին տենչը հանդէպ մեր պաշտելի հայրենիքին, բայց ան դեռ հեռու է մեզմէ, մինչ ագարակն ու բուրաստանը որ մեզի յանձնուած է մեր Թափառումին, մեր աստանդական տարուբերումներուն մէջ՝ մեր սերունդն է, այնքան մեզի մօտ եւ այնքան անտեսուած։ Աստուածատունկ դրախտն անգամ անբեր, անպտուղ էր, երբ դեռ «չէր մարդ որ գործէր զերկիր»։ Ահա Հայ մշակոյթի մեծագոյն եւ ստի-